ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀՈՒՇԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ 1-Ի ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական վարչության պետ՝ Վ. Մկչտչյանի, համայնքի ավագանու և 102 համայնքի բնակիչների :

2012թվականի հուլիսի 12-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հուշակերտ գյուղական համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանցից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով, «Տեղական Ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի աշխատակազմի» ավագանու և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:

Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2012թ. 1-ին կիսամյակի ընթացքում:Այդ խնդիրների լուծման համար աջակցել են Արմավիրի մարզպետը, մարզպետարանի աշխատակազմը, համայնքի ավագանին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղապետը աջակցել է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ.մթերքների իրացմանը:

Հետևողական աշխատանք է տարվում ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև կազմակերպում է աշնանացան հացահատիկի բերքահավաք:

Գյուղն ունի իր առանձնահատկությունները:

Հիմնականքում զբաղվում են հողագործությամբ և այգեգործությամբ և պտղաբուծությամբ:

ՈՒշադրություն կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքներին և պարբերաբար կատարվում է ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքները:

Կառավարության և մարզպետարանի աջակցությամբ բնակչությանը մատչելի գներով հատկացվել է պարատանյութ և վառելիք:

2011թվականի աշնանը կառավարության կողմից հատկացված աշնանացան հացահատիկի սերմացուն չարդարացրեց գյուղացիների սպասելիքներ և չի վերականգնի նույնիսկ գյուղացիների աշնանացան հացահատիկի վրա կատարած ծախսերը :

Համայնքում այսօր դեռևս կան պարարտանույթի և թունաքիմիկատների բարձր սակագները և անորակությն:

Անմիջական հսկողություն է իրականացվում ասնաբուժական ծառայության գործում՝ ժամանակին կատարվում է բոլոր տեսակի հակահամաճարակային միջոցառումները կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղությամբ:Կենդանիների շրջանում չի հայտնաբերվել ոչ մի տեսակի հիվանդություն:

Հետևողական և սիստեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործողության վրա:Ներկայումս համայնքում գործում է 4 առևտրի և 1 բենզալցակայան:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման, ինչպես նաև ապօրինի ընդերքօգտագործման վրա:Սիստեմատիկ տեղեկատվություն է ներկայացվում անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումը՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականներում ճշգրտումներ կատարելու վերաբերյալ:

Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի , գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման գործում:Բնակիչներին տեղեկացվում և ծանուցվում է «Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:
Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվել են ճշտված իրավիճակային հատակագծեր:
Սիստեմատիկաբար կատարվում է աղբահանություն:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ,ԿՐԹՈՒԹՅԱՆ , ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ,ՍՊՈՐՏԻ,ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է միջնակարգ դպրոց:
Աշակերտների թիվը՝ 126:
Աշխատողների թիվը՝ 25-ը, ուսուցիչներ՝ 25:
Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը:Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա:Գյուղապետարանի միջնորդությամբ դպրոցին հատկացվել է 40 միլիոն դրամ դպրոցի ջեռուցման հարց լուծելու համար:
Կազմակերպվել է միջոցառում նվիրված մայիսի 9-ին և զորակոչի հետ:
Գյուղապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում է նաև առողջապահության ոլորտը:Բուժ. ամբուլատորիան կահավորված է ժամնակակից սարքավորումներով, համայնքի բնակչության բուժ. սպասարկումը գտնվում է բարձր մակարդակի վրա, ունի շտապօգնության մեքենա:
Համայնքում գործում է « Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողով, որի հիմնական խնդիրն է՝ անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների, ինչպես նաև անչափահասների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը, ընտանիքում ապրելու ու դաստիրակելու երեխայի իրավունքի ապահովումը, կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, այդ թվում ՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը:
ՈՒշադրության կենտրոնում է գտնվում սոցիալապես անապահով ընտանիքները:Անապահով ընտանիքի 8-12տարեկան 10 երեխաներ ուղարկվել են ճամբար հանգստանալու:
Համայնքում բարձր է պատասխանատվությունը զորակոչի նկատմամբ:Զորակոչից խուսափողներ չկան:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2012թվականի 1-ին կիսամյակում բյուջեի կատարողական՝

Եկամուտներ	հաստատված տարեկան պլան	հազար դրամ 2012թ. 1-ի կիսամյակի պլան	փաստացին
հողի հարկ	9753.4	3000,0	106,9
գույքահարկ	1000,0	400,0	401,1
տեղական տուրք	230,0	120,0	0
վարձավճար	300.0	150,0	82,6
պատվ. լիազորություններ	300.0	150,0	0
ոչ հարկային եկամուտ	1500,0	750,0	400,6
դոտացիա	5641,6	2819,9	2819,9
համայն.գույքի օտարում	2000,0	1000,0	0
ԴԱՀԿ			-48,2
ընդամեն	20725,0	8939,9	3767,1

Բյուջեյի կատարողական ծախսերի գծով

	տարեկան հաստատված	1-ի կիսամյակ պլան	փաստացի
Ընդամեն	20725,0	8939,8	3725,2
աշխատավարձ	11300,0	5650,0	2037,5

պարտադիր սոց. վճար	2250,0	1125,0	380,0
գրասենյակային ապրանք	300.0	150,0	176,0
աղբաթափություն	200.0	100,0	0
գույք և սարքավորում	200,0	100,0	0
սոց. օգնություն	200,0	100,0	0
գործուղում	500.0	250,0	0
էլ էներգիա	2000,0	1152,0	1152,0
համակարգչային ծառայութ.	75,0	30,0	21.6
տեղեկատվական ծառայություն	200,0	100,0	0
կապիտ.վերան. ծախս	1500,0	0	0
պահուստ.ֆոնդ	1000,0	0	0
նախորդ տարիների պարտքի մար	2000.0	0	0
ընդանուր բնույթի ծառայություն	200,0	0	0
պատ լիազորություններ	300,0	150,0	0
ԴԱՀԿ		0	- 46,2

Նախորդ տարինեի աշխատավարձի պարտք

Հուշակերտ համայնքի

ղեկավար՝ Ս.Մխիթարյան

ՀՈՒՇԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔ

Հուշակերտ համայնքի այսօրվա հիմնախնդիրներն

1. Մշակույթի տան հիմնավերանորոգում:
2. Մանկապարտեզի հիմնավերանորոգում:
3. Փողոցների ասֆալտի վերանորոգում:
4. Փողոցների լուսավորություն:

Արմավիրի մարզի Հուշակերտ համայնքի

ղեկավար՝ Ս.Մխիթարյան